

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


ԴՈՎԼԱԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԳՈՎՀԱՆՆԵՄԻ

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը. 00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»
մասնագիտությամբ
տնտեսական գիտությունների թեկնածուի զիտական աստճանի
հայցման ատենախոսությամբ

ՍԵՂՄԱԳԻՐ

ցումբուղ . ԴՈ



Ստեփանի ,Սատիսն
ցումբաստվեռոցտցտ ,Սոնաստմոժ
ցոհտտվե վնսկսսվ ցոհտտվեռոցոց 4 14 0

:ցն: 24-ից վեցնեցտեոց վցոհտտվե 3 2013 ցոհիժաստ ցնկեռոցոց

ցոհտտեցի ցոհտտոցոց :ցոցոցոցոցոց ցոհտտոցոցոց ցոհտտոցոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

:82 ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

:ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

տաստտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց
ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց

ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց ցոհտտոցոց

դեպի դրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնողները՝ դրանով իսկ նպաստելով տնտեսության մեջ ներդրումային միջոցների ձևավորմանը: Ակնհայտորեն, շուկայական տնտեսության պայմաններում ավանդների հետ կապված գերակա խնդիրներից մեկը դրանց եկամտաբերության ու պաշտպանվածության ապահովումն է: Այս տեսանկյունից, նշված խնդրի լուծման միջոցներից մեկը ավանդների ապահովագրումն է, որը բանկի սնանկության դեպքում ավանդատուին երաշխավորվում է իր ավանդի վերադարձելիությունը: Կարելի է պնդել, որ ավանդների պարտադիր ապահովագրման համակարգը նպատակաուղղված է բանկային համակարգի զարգացմանը, բանկերի կողմից ֆինանսական միջնորդության արդյունավետ իրականացմանը և ավանդատուների շահերի պաշտպանությանը:

Բանկային համակարգի կողմից կենտրոնացվող ֆինանսական ռեսուրսների շարքում իրենց կարևոր տեղն ու դերն ունեն ավանդները, որոնց ձևավորման առումով ներկայումս գոյություն ունեն այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության ցածր մակարդակը, բանկային գործունեության կարգավորման ոչ բավարար արդյունավետությունը և մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ: Այս տեսանկյունից, ֆինանսական միջնորդության շրջանակների ընդլայնմանն ու ամրապնդմանն ուղղված քայլերը ներկա փուլում խիստ կարևոր նշանակություն ունեն ինչպես բանկային համակարգի, այնպես էլ ընհանուր տնտեսության զարգացման համար: Ակնհայտ է, որ բանկերի ֆինանսական վիճակի ամրապնդումը և տնտեսության իրական հատվածի հետ արդյունավետ փոխգործակցությունը հնարավոր չէ առանց ավանդատուների կողմից բանկային համակարգի նկատմամբ վստահության նոր մակարդակի, ինչպես նաև նրանց շահերի և հետաքրքրությունների պաշտպանության ամբողջական համակարգի ձևավորման: Վերջիններս կարևոր պայման են հանդիսանում բնակչության կողմից սեփական խնայողությունները որպես ավանդ բանկային համակարգում տեղաբաշխելու համար: Սիաժամանակ, բանկային համակարգում հնարավոր ճգնաժամային իրավիճակների առաջացման պարագայում ավանդատուները պետք է հստակ երաշխիքներ ունենան, որ իրենց կողմից ներդրված միջոցները հնարավորինս կարճ ժամկետներում և նվազագույն կորուստներով կվերադարձվեն: Հակառակ պարագայում, բնակչության խնայողությունների կորուստը կհանգեցնի ոչ միայն բանկային համակարգի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը, այլ նաև հասարակության մեջ սոցիալական առումով անցանկալի երևույթների դրսևորմանը:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների դրական արդյունքներին զուգահեռ, ամբողջությամբ չապահովեցին ավանդների ապահովագրման համակարգի գործունեության կարգավորման առավելագույն արդյունավետություն պայմանավորված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Բանկային համակարգի հետագա

զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրացման խորացման, բանկային համակարգի ռեսուրսային ապահովվածության ամրապնդման և դրա նկատմամբ բնակչության վստահության մակարդակի բարձրացման, ինչպես նաև տնտեսության իրական հատվածի հետ փոխգործակցության խորացման հետ կապված խնդիրների լուծումը պահանջում է հանրապետությունում ավանդների ապահովագրման համակարգի զարգացման ուղղությամբ որակապես նոր և գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակում և կիրառում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Ատենախոսության նպատակն և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում ավանդների ապահովագրման համակարգի կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բանկային ավանդների ապահովագրության առանձնահատկությունները, գնահատել ավանդների դերը բանկային համակարգի և տնտեսության զարգացման գործում, բացահայտել դրանց ծավալների վրա ազդող գործոնները,
- ուսումնասիրել ավանդների ապահովագրության ինստիտուցիոնալ մեխանիզմները և դրանց գործունեության առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,
- ուսումնասիրել ավանդների ապահովագրման համակարգի էությունը և տնտեսական բովանդակությունը, բացահայտել դրա արդյունավետության վրա ազդող գործոնները,
- վերլուծել ավանդների ներգրավման վերջին տարիներին ձևավորված դինամիկան և դրանց ապահովագրության համակարգի առանձնահատկությունները հանրապետությունում,
- ուսումնասիրել ավանդների ապահովագրման համակարգի միջազգային փորձը, վերլուծել դրա զարգացման համաշխարհային միտումները և գնահատել դրանց կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
- վերլուծել հանրապետությունում բանկային ավանդների ապահովագրման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական բազան, բացահայտել առկա թերությունները և մշակել դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ,
- մշակել մոտեցումներ հանրապետությունում ավանդների ապահովագրման համակարգի կատարելագործման և զարգացման ուղղությամբ:

Ատենախոսության օրյեկտն և առարկան: Ուսումնասիրության օրյեկտը հանրապետությունում գործող բանկային և ավանդների ապահովագրման համակարգերն են, իսկ հետազոտության առարկան՝ ավանդների ապահովագրման համակարգի խնդիրները և բարելավման ուղիները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Ավանդների հատուցումը երաշխավորող Հիմնադրամի, ՀՀ բանկերի և մի շարք նախարարությունների և գերատեսչությունների նյութերը, ինչպես նաև այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական տվյալները, ամսագրերը, փորձագիտական գնահատականները, հետազոտությունների արդյունքները, միջազգային գիտաժողովների նյութերը և այլ հրապարակումներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական խմբավորումների և համեմատական վերլուծությունների, համակարգային, ինդուկտիվ և դեդուկտիվ վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթ: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- մշակվել են առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում ավանդների ապահովագրության համակարգի կատարելագործման և բանկային համակարգի կայունության ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝ կապված ավանդների ապահովագրությունն իրականացնող մարմնի գործունեության թափանցիկության և վերահսկելիության մակարդակի բարձրացման, ավանդների ապահովագրման գործընթացում ներգրավված սուբյեկտների շրջանակների ընդլայնման հետ,
- ավանդների ապահովագրման գործող համակարգի համակողմանի վերլուծության արդյունքում առաջարկվել է տարբերակված մոտեցում կիրառել արտարժույթով և դրամով ներդրված ավանդների դիմաց կատարվող պարբերական երաշխիքային վճարների համար, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այդ վճարների գանձման դադարեցման փոխարեն հիմնավորվել է բանկերի կողմից Հիմնադրամին երաշխիքային վճարների կատարման անհրաժեշտությունը, որը թույլ կտա կուտակված միջոցների ծավալների մեծացմանը զուգընթաց ավելացնել երաշխավորված ավանդների չափերը,

- հանրապետությունում ավանդների ապահովագրման համակարգի գործունեության համակողմանի վերլուծության արդյունքում առաջարկվել է երաշխիքային վճարների տարբերակման միջոցով որոշակի կախվածություն սահմանել ապահովագրավճարների և բանկի կայունության ցուցանիշի միջև, ինչը կնպաստի բանկերի կողմից սեփական ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների բարելավման խթանների ձևավորմանը,
- բանկերի կողմից պարբերական երաշխիքային վճարների իրականացման մեխանիզմի վերլուծության արդյունքում առաջարկվել է պարբերական երաշխիքային վճարներ սահմանել ոչ թե բոլոր, այլ միայն երաշխավորման ենթակա բանկային ավանդների գծով, ինչը հնարավորություն կտա բանկերին որոշակի ծախսերի կրճատման միջոցով բարձրացնել բանկային ծառայությունների մատչելիությունը:

Ատենախոսության արդյունքների կիրառումը և գործնական

նշանակությունը: Ավանդների ապահովագրության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների և կենտրոնական բանկի կողմից ավանդների ապահովագրության համակարգի կատարելագործման և զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված երեք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Աշխատանքը շարադրված է 143 համակարգչային էջի վրա, պարունակում է 12 աղյուսակ, 12 գծապատկեր, օգտագործված գրականության ցանկ և 6 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունն ու կարևորությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումները և աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Բանկային ավանդների ապահովագրման անհրաժեշտությունը և առանձնահատկությունները» գլխում, ներկայացված են բանկերի ավանդային գործառնությունները և դրանց կառավարման առանձնահատկությունները, վերլուծվել է ավանդների կարևորությունը և դրանց աճի միտումները՝ հիմնավորելով նման կարևոր ռեսուրսի ապահովագրության անհրաժեշտությունը և ավանդների ապահովագրման առանձնահատկությունները ընդհանուր ապահովագրության համեմատ:

Ժամանակակից պատկերացումներով բանկը յուրահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը ավանդների տեսքով ներգրավում է միջոցներ, տրամադրում վարկեր, իրականացնում չեկերով և արտարժույթով գործառնություններ, մատուցում տարբեր տեսակի այլ ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսվարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց: Բանկը հանդես է գալիս որպես ֆինանսական միջնորդ դրամական միջոցներ տրամադրողների և օգտագործողների միջև: Բանկերի ռեսուրսները ձևավորվում են գլխավորապես ներգրավված միջոցների հաշվին, այսինքն՝ նրանց պասիվների կառուցվածքում պարտավորությունները մեծ տեսակարար կշիռ ունեն:


Բավական է նշել, որ բանկերի սեփական կապիտալը հաճախ չի գերազանցում ընդհանուր պասիվների 10%-ը, ինչը կախվածության մեջ է դնում նրանց ներքին և արտաքին գործոններից: Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականի տվյալներով բանկերի սեփական կապիտալը պասիվների կառուցվածքում կազմել է մոտ 16.2%:

Տարբեր բանկերում այն տատանվում է 11.1%-ից (Հայբիզնեսբանկ) մինչև 69.4% (Մեյլաթ բանկ) միջակայքում, ինչը վկայում է, որ վերջին բանկի պասիվների կազմում մեծ տեսակարար կշիռ ունի սեփական կապիտալը, որն էլ իր հերթին վկայում է միջոցների ներգրավման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտության մասին:

Բանկային գործունեության առանցքային կողմերից է ավանդատուների հետ փոխշահավետ և հուսալի փոխհարաբերությունների համակարգի ստեղծումը: Աշխարհի տարբեր երկրներում բանկերի զարգացման արդյունքում մշակվել և ներդրվել են ավանդների ապահովագրման տարբեր համակարգեր: Ավանդների ապահովագրման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը հասկանալու համար պետք է դիտարկել մի շարք հարցեր: Ավանդներ ներգրավող ֆինանսական ինստիտուտները կարևոր դեր են խաղում ժամանակակից

տնտեսությունում, քանի որ հանդիսանում են վճարային համակարգի մասնակիցներ, միջնորդ ազատ դրամական միջոցներ տնօրինողների և փոխառու միջոցների կարիք ունեցողների միջև, ինչպես նաև ակտիվ դերակատարություն ունեն երկրի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործում: Մինևույն ժամանակ բանկային գործարարությունը կապված է ռիսկերի ընդունման և կառավարման հետ: Բանկերի զգայունությունը իրացվելիության խնդրի նկատմամբ և մեծ կախվածությունը տնտեսական սուբյեկտների վճարունակության մակարդակից պայմանավորում են յուրաքանչյուր երկրում ֆինանսական անվտանգության ապահովման համակարգերի ձևավորման անհրաժեշտությունը: Նման համակարգը, սովորաբար, ներառում է կարգավորման, բանկային գործունեության վերահսկման, վերջին ատյանի վարկատուի, ինչպես նաև ավանդների ապահովագրման գործառույթները:

2006-2012թթ. բանկերի կողմից իրականացված ավանդային գործառնությունների ծավալների հետ վերլուծությունները ցույց են տալիս¹, որ ՀՀ բանկային ավանդները 2011թ-ին 2010թ-ի համեմատ աճել են 276.5 մլրդ դրամով կամ 36%-ով, իսկ 2012թ-ին 2011-ի համեմատ՝ 158.4 մլրդ դրամով կամ 15%-ով:




Գծապատկեր 1.

Բանկերի կողմից իրականացված ավանդային գործառնությունների ծավալները (մլրդ դրամ)

Եթե դիտարկենք ՀՀ տարածքում գործող յուրաքանչյուր բանկի կողմից իրականացված ավանդային գործառնությունները (ֆիզիկական և

¹ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր 2012, դեկտեմբեր թիվ 12 (172)

իրավաբանական անձանց հետ կապված) 2009-2012թթ. կտրվածքով, ապա կատանանք հետևյալ պատկերը.



Գծապատկեր 2.

Բանկային ավանդների ծավալները 2009 – 2012թթ (իզ. դրամներով)

Պատկերից ակնհայտ է դառնում, որ 2009 – 2012 թթ ավանդային գործառնությունների ծավալով ՀՀ բանկային հատվածում առաջատար է էԼՃ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Հայաստան բանկը:

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունները փաստում են նաև այն մասին, որ բանկերի ավանդային պորտֆելում իրավաբանական անձանց ավանդները զգալի ծավալ են կազմում և հետզհետե աճի միտում ունեն, ուստի կարևորում ենք նաև այս խմբի ավանդատուների շահերի պաշտպանության նպատակով՝ իրավաբանական անձանց բանկային ավանդների ապահովագրություն, ինչը լայնորեն կիրառվում է արտերկրում: Օրինակ՝ կարող ենք նշել Սերժբալթյան երկրները, որտեղ ավանդների երաշխավորման համակարգը (ինչպես Եվրոմիության այլ անդամ երկրներում) տարածվում է ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձանց վրա, դրա հետ մեկտեղ այս երկրներում տվյալ համակարգը նախատեսում է նաև ներդրումների և կենսաթոշակային հիմնադրամներում ներդրումների ապահովագրում:

Բանկերի ավանդատուների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը երկրներին պարտադրում է օգտագործել որոշակի խմբի վարկատուների ռիսկերը սահմանափակող տարատեսակ մեխանիզմներ: Սի շարք երկրներում ավանդատուների շահերի ապահովման մեխանիզմները ֆորմալացված չեն, օրենսդրությունը չի սահմանում բանկերի պաշտպանության ենթակա պարտավորությունների շրջանակը, փոխհատուցման ենթակա սահմանաչափերը

և անվճարունակ բանկերի նկատմամբ պահանջների բավարարման ձևերը: Այնինչ համապատասխան օրենքի առկայության պարագայում հասարակության մոտ պետության կողմից իր համաքաղաքացիների շահերի պաշտպանության նկատմամբ անորոշություն չի առաջանում, ինչպես նաև սահմանափակվում է սուբյեկտիվիզմի հնարավորությունը, որը կարող է առաջանալ այս կամ այն բանկի հետ կապված իշխանությունների կողմից որոշումների կայացման ընթացքում:

Չարկ է նշել, որ ավանդների ապահովագրման համակարգը, նույնիսկ եթե լավ է կազմակերպված, այնուհանդերձ թույլ է տալիս հաղթահարել իրավիճակը միայն սահմանափակ քանակով միաժամանակ սնանկացած բանկերի պարագայում: Բնականաբար չի կարելի ակնկալել, որ տվյալ համակարգը կարող է ինքնուրույն հաղթահարել համակարգային ճգնաժամը: Նման իրավիճակի հաղթահարումը կարող է պահանջել պետության կողմից արտակարգ միջոցառումների իրականացում, այսպես օրինակ՝ օրենսդրորեն ընդունվի որոշակի ժամկետով բանկային ավանդների լրիվ չափով փոխհատուցման երաշխիքների կամ բանկային հատվածին ինչ-որ եղանակներով ֆինանսական աջակցության տրամադրում:

Աշխատությունում անդրադարձ կատարվել է նաև հաճախ քննարկվող ավանդական ապահովագրության և ավանդների պարտադիր ապահովագրության հարաբերակցության հարցին: Սասնավորապես արդյո՞ք կարելի է ավանդների պարտադիր ապահովագրության ընթացքում ծագող հարաբերություններն անվանել ապահովագրական: Առաջին հայացքից ավանդների պարտադիր ապահովագրությունը ամբողջովին համապատասխանում է ապահովագրության բոլոր հիմնական հատկանիշներին: Սակայն ապահովագրական հարաբերությունների և իրեն վերաբերող բնորոշ հատկանիշների առավել մանրակրկիտ դիտարկման ընթացքում ի հայտ են գալիս որոշակի տարամիտումներ ավանդների պարտադիր ապահովագրման և ապահովագրման միջև: Առանձնացնում են հետևյալ ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են բոլոր տեսակի ապահովագրական պայմանագրերին.

- պայմանագրի ինքնուրույնություն
- երկկողմանի բնույթ
- պայմանագրի ռիսկային բնույթ
- ապահովագրողի սահմանափակ պատասխանատվություն
- այդ պատասխանատվության շտապ բնույթ
- պայմանագրով նախատեսված իրադարձության պատահական բնույթ
- հատուցելիություն
- պայմանագրի նպատակը՝ ուղղված ապահովագրողի կամ շահառուի ապահովությանը հնարավոր վնասից և անբավարարությունից:

Ինչ վերաբերում է ավանդների պարտադիր ապահովագրման հարաբերություններին, ապա դրանց բնորոշ է ապահովագրական

հարաբերությունների թվարկված հատկանիշների մեծ մասը: Դրա հետ մեկտեղ վիճարկելի է այդ հարաբերությունների համապատասխանելիությունը այնպիսի հատկանիշներին, ինչպիսիք են պայմանագրի ինքնուրույնությունը և ապահովագրման նպատակը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ավանդների ապահովագրման միջազգային փորձը և դրա կիրառելիությունը ԳԳ-ում» գլուխում, քննարկվել է ավանդների ապահովագրման միջազգային փորձը, դիտարկվել են բանկային վերահսկման Բազելյան կոմիտեի և Ավանդներ ապահովագրողների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի ստեղծման սկզբունքները և բանկի անվճարունակության ռիսկի կառավարման անհրաժեշտությունը՝ որպես Ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգի տարր:

Վերջին ֆինանսական ճգնաժամի հետ կապված իրադարձությունները ցույց տվեցին, որ բանկային համակարգի և, ընդհանուր առմամբ տնտեսության կայունության ապահովման համար խիստ կարևոր է մշակել և գործնականում կիրառել բանկային ավանդների ապահովագրման և փոխհատուցման արդյունավետ միջոցառումներ: Այդ նպատակով բանկային վերահսկման Բազելյան կոմիտեն և Ավանդներ ապահովագրողների միջազգային ասոցիացիան մշակել են ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի հիմնարար սկզբունքներ, որոնք խրախուսվում են կիրառելու տարբեր երկրներում:

Ավանդների ապահովագրման համակարգերի ներդրումը կարող է լինել առավել արդյունավետ, եթե երկրի բանկային համակարգը վերահսկելի է, իսկ ինստիտուցիոնալ միջավայրը՝ կայուն: Հանրության վստահությունից օգտվելու և ոչ բարեխիղճ մրցակցությունից խուսափելու համար ավանդների ապահովագրման համակարգը պետք է լինի լավ կազմակերպված ֆինանսական անվտանգության ցանցի կարևորագույն մասը: Սովորաբար ֆինանսական անվտանգության ցանցը ներառում է վերահսկողության և կարգավորման, ինչպես նաև վերջին տալանի վարկատու և ավանդների ապահովագրման համակարգեր:

Հարկ է նշել, որ ավանդների ապահովագրման համակարգը նախատեսված չէ համակարգային ճգնաժամեր հաղթահարելու համար: Նման իրավիճակներում կարևոր է, որ ֆինանսական անվտանգության ցանցի բոլոր մասնակիցները սերտորեն համագործակցեն միմյանց հետ: Կարծում ենք, որ համակարգային ճգնաժամի կարգավորման ծախսերն ևս չպետք է բաժին ընկնեն միայն ապահովագրական համակարգի միջոցներին: Այդ նպատակով անհրաժեշտության դեպքում պետք է ներգրավվեն նաև պետական միջոցներ:

Հիմնարար սկզբունքները մշակված են այնպես, որ կարող են հարմարեցվել տարբեր երկրներում գործող բանկային ավանդների ապահովագրման համակարգերին: Այդ սկզբունքները նախատեսված են որպես արդյունավետ ավանդների ապահովագրման համակարգի կառուցման համար անհրաժեշտ

նախապայման: Իհարկե, ցանկացած երկիր կարող է լրացուցիչ պայմաններ կիրառել, որոնք անհրաժեշտ է համարում ավանդների ապահովագրման միջոցառումները առավել արդյունավետ իրագործելու համար: Հարկ է նշել, որ սկզբունքները նախատեսված չեն բանկային համակարգերի բոլոր պահանջմունքների բավարարմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է դիտարկել և խորապես վերլուծել յուրաքանչյուր երկրում առկա խնդիրները, մշակել համապատասխան օրենսդրական դաշտ և լինել հետևողական դրա կիրառման հարցում:

Ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգը պետք է հիմնված լինի մի շարք արտաքին բաղկացուցիչների վրա, որոնք անուղղակի կերպով ներգործում են համակարգի վրա: Դրանք են՝ տնտեսության և բանկային համակարգի փաստացի վիճակի շարունակական գնահատում, ֆինանսական անվտանգության ցանցի մասնակիցների արդյունավետ կառավարում, դրանց խիստ վերահսկում և կարգավորում, լավ կազմակերպված իրավական համակարգ, հաշվետվությունների և տեղեկատվության մատչելիություն:

Աշխատանքում քննարկվել է նաև բանկի անվճարունակության ռիսկի կառավարման դերը Ավանդների ապահովագրման համակարգում: Ինչպես հայտնի է, ռիսկերի ընդունումը բանկային գործի հիմքն է կազմում: Բանկերը հաջողություն են ունենում այն ժամանակ, երբ իրենց կողմից ընդունվող ռիսկերը հիմնավորված են, վերահսկելի և գտնվում են իրենց ֆինանսական հնարավորությունների և իրավասությունների սահմաններում: Ռիսկերի սխալ գնահատման կամ արդյունավետ միջոցներ կիրառելու հնարավորության բացակայության արդյունքում բանկը կարող է սնանկանալ:

Գոյություն ունեն երեք գլխավոր հանգամանքներ, որոնք կարող են լինել բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ²

- ակտիվների կորուստը,
- իրացվելիության կորուստը,
- հիմնական գործունեությունից կրած վնասները:

Սիջազգային պրակտիկայում առևտրային բանկերի ակտիվների ընդհանուր ծավալի 30- 50%-ը կազմում են վարկային ներդրումները: Հետևաբար՝ վարկավորման բնագավառում լուրջ անհաջողություններն ուղեկցվում են զգալի կորուստներով և, ի վերջո, հանգեցնում բանկի սնանկացմանը: Վարկը դառնում է խնդրահարույց, եթե վարկառուն չի կարողանում պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել տոկոսները կամ մարել փոխառության գումարը:

Ակտիվների կորուստների տեսակներից է նաև բանկի կողմից ձեռք բերված ներդրումային արժեթղթերի (բաժնետոմսերի և պարտատոմսերի) արժեզրկումը՝ դրանք ձեռք բերելու պահից մինչև վաճառքի պահն ընկած ժամանակաշրջանում:

² Բ. Սատրյան, Բանկային գործ, Երևան 2004, էջ 616

Այսպես, ԱՄՆ-ում 1930- 1933թթ-ին բանկերի սնանկության հիմնական պատճառը դրանց պարտատոմսերի շուկայական արժեքի անկումն էր:

Համաձայն ՀՀ տարածքում գործող բանկերի ակտիվների և ինվեստիցիոն արժեթղթերում կատարված ներդրումների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերի՝ բանկերը պարտավոր են սահմանված ժամկետներում դասակարգել իրենց ակտիվները, իսկ դրանք անհուսալի ճանաչվելու դեպքում՝ դուրս գրել հաշվեկշռից: Արդյունքում բանկի ակտիվների ընդհանուր գումարը փոքրանում է անհուսալի ճանաչված և դուրս գրված ակտիվների գումարի չափով: Հետևաբար, նույն գումարով պակասում է նաև բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը:

Բանկերի ակտիվների կորուստները կարող են կապված լինել նաև բանկի ակտիվների հափշտակումների հետ:

Բանկերը պետք է ունենան բավարար իրացվելիություն պարտատերերի պահանջները ժամանակին կատարելու համար: Բանկի իրացվելիությունը կախված է նրա ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռվածության աստիճանից: Իրացվելիության անբավարարությունը հիմնականում պայմանավորված է ներգրավված և տեղաբաշխված միջոցների՝ ըստ ժամկետների և գումարի անհավասարակշռված տեղաբաշխմամբ, վաճառքների անսպասելի զանգվածային արտահոսքով: Նման հիմնախնդրի առջև կանգնած բանկերը հաճախ ստիպված են լինում կանխիկ միջոցների նկատմամբ ընթացիկ պահանջները բավարարելու համար շտապ ներգրավել բարձր տոկոսադրույքներով միջոցներ, ինչը հանգեցնում է շահույթի փոքրացման կամ վնասների առաջացման, հետևաբար բանկի կապիտալի նվազման: Իրացվելիության հետ կապված խնդիրներից խուսափելու համար առևտրային բանկերը Կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելուց զատ՝ դրամական միջոցներ են պահում նաև իրենց թղթակցային հաշիվներում, որը զգալիորեն գերազանցում է պարտադիր պահուստավորման նորմատիվով տրված սահմանաչափը: Սակայն, ինչպես հայտնի է դա բերում է բանկի եկամտաբերության անկման: Ուստի այստեղ առավել կարևորվում է հիմնավորված չափի «իրացվելիության բուժեր» կոչվածի կիրառումը: Իրացվելիության բուժերը սահմանվում է որպես հասանելի ավելցուկային իրացվելիություն, որը կարող է օգտագործվել կարճաժամկետում իրացվելիության սթրեսի պայմաններում: Այլ կերպ ասած, սա իրացվելիության այն հասանելիությունն է, որը թույլ է տալիս խուսափել որոշակի առանձնահատուկ քայլեր իրականացնելու անհրաժեշտությունից: Բուժերի մեծությունը պետք է որոշվի որոշակի ժամանակային հորիզոնի համար իրականացված սթրեսային սցենարների ժամանակ առաջացող ֆինանսավորման հնարավոր ճեղքվածքի հիման վրա: Իրացվելիության բուժերը չպետք է փոխարինի այլ միջոցառումներին, որոնք ձեռնարկվում են ֆինանսական ճեղքվածքը և բանկի ֆինանսավորման աղբյուրները կառավարելու համար:

Իրացվելիության բուժերը յուրաքանչյուր բանկի իրացվելիության ռիսկի կառավարման հիմնական բաղկացուցիչն է հասանելի լինելով այն դեպքերում, երբ բանկը տուժում է այս կամ այն սթրեսային իրավիճակից:

Միևնույն ժամանակ, բուժերների չափազանց մեծ ծավալները ևս անցանկալի են բանկերի համար: Մեծ ծավալների ավելցուկային իրացվելիությունը բանկի համար նշանակում է ոչ եկամտաբեր կամ ցածր եկամտաբեր ակտիվների մեծ պաշարներ բանկի հաշվեկշռում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի տոկոսային եկամուտների և ընդհանրապես, բանկի արդյունավետության ցուցանիշների վրա: Միևնույն ժամանակ, կանխիկ դրամական միջոցները իրենց վրա էապես կրում են գնաճի բացասական ազդեցությունը, ինչը ևս գնաճի բարձր մակարդակի պարագայում կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի արդյունավետության վրա:

Ըստ այդմ, անհրաժեշտ ավելցուկային իրացվելիության ունիվերսալ մակարդակ բոլոր բանկերի համար գոյություն չունի: Իրացվելիության բուժերը հաշվարկելիս և ավելցուկային իրացվելիության նկատմամբ պահանջարկը գնահատելիս յուրաքանչյուր բանկ պետք է ելնի իր չափերից, առանձնահատկություններից, գործառնությունների ծավալներից և այլն:

Բանկի սնանկության պատճառ կարող են լինել նաև նրա հիմնական գործունեությունից առաջացած վնասները: Վնասով աշխատող բանկի սեփական կապիտալը փոքրանում է, երբ այդ վնասները շարունակվում են բավականին երկար ժամանակ: Վնասները կարող են հանգեցնել բանկի կապիտալի զգալի կամ ամբողջովին սպառման և սնանկացման:

Ատենախոսության երրորդ՝ **«Ավանդների ապահովագրման համակարգի կատարելագործման խնդիրները 33-ում»** գլուխում, ուսումնասիրվել է 33 ավանդների ապահովագրման համակարգը, Ավանդատուների շահերի պաշտպանության իրավական դաշտը, բացահայտվել են թերությունները և առաջարկվել համապատասխան լուծումներ:

Հայաստանի Հանրապետությունում բանկային ավանդների ապահովագրման համակարգի ներդրման գծով առաջին քննարկումները սկսվեցին 1990-ականների կեսերին, երբ ստեղծված է զարգացող բանկային համակարգում դրսևորվեց նման ապահովագրության անհրաժեշտություն՝ ավանդատուների շրջանում բանկերի հանդեպ վստահությունը մեծացնելու նպատակով: Ավանդների ապահովագրման համակարգի ներդրման անհրաժեշտությունը ամրագրվեց 1998թ. ընդունված 33 քաղաքացիական օրենսգրքով: Սասնավորապես ասվում էր. Բանկերը պարտավոր են պարտադիր ապահովագրման միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ եղանակներով, ապահովել քաղաքացիների ավանդների վերադարձը:

Ֆիզիկական անձանց ավանդների ապահովագրման իրավական նեխանիզմները սահմանվեցին դեռևս 2001 թվականին, երբ «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» 33 օրենքը լրացվեց նոր

«Բանկային ավանդների պարտադիր երաշխավորումը» գլխով: 2004 թվականի նոյեմբերի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտավ 2005 թվականի հունվարի 7-ից: Օրենքն ամբողջացնում և համակարգված ձևով ներկայացնում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման երաշխավորմանը վերաբերող կարգավորման դաշտը: Այդ օրենքի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի հուսալիությանը, բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և ապահովել ավանդատուների շահերի պաշտպանությունը: Տվյալ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, պատկանող բանկային ավանդների՝ օրենքով սահմանված չափով հատուցումը երաշխավորելու հետ կապված հարաբերությունները:

Ավանդների ապահովագրման համակարգի ստեղծումը Հայաստանի Հանրապետության՝ որպես անցումային փուլում գտնվող երկրի, շատ կարևոր էր: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հանրության գիտակցության մեջ դեռևս թարմ էին այն հիշողությունները, որոնք կապված են ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած Խնայբանկում բնակչության ավանդների սառեցման հետ: Մի շարք այլ հանգամանքներ (երկրաշարժ, տնտեսական կապերի խզում և այլն), հանգեցրին բնակչության աղքատացմանը, ինչպես նաև խարխլեցին բնակչության հավատը բանկային համակարգի հանդեպ: Դրան գումարվեց նաև այն, որ նորաստեղծ հանրապետությունում դեռևս բավարար օրենսդրական դաշտի և վերահսկողության բացակայության պայմաններում, մի շարք բանկերի ղեկավարների կողմից տնտեսության զարգացման սխալ գնահատման, վատ կառավարման և ֆինանսական մեքենայությունների արդյունքում քաղաքացիների ներդրած ավանդները փոշիացան: Սիա թե ինչու ավանդների երաշխավորման համակարգի ներդրումը ՀՀ բանկային համակարգի հուսալիության, բանկային համակարգի հանդեպ վստահության բարձրացմանը և առաջնությունների շահերի պաշտպանությանը նպաստակարողված նշանակալից քայլ էր: Ավանդների երաշխավորման համակարգի ներդրմանը զուգահեռ 2005թ. ընթացքում ֆիզիկական անձանց բանկային ավանդների ոլորտում նկատվել են դրական տեղաշարժեր, որոնք մասնակիորեն կարելի է վերագրել նաև երաշխավորման համակարգի ներդրմանը:

2010թ-ին օրենսդրական փոփոխությունների և լրամշակումների արդյունքում կրկնապատկվեցին երաշխավորվող ավանդի մեծության չափերը: Դա նույնպես նպաստեց 2009թ. համեմատությամբ 2010թ ՀՀ բանկային համակարգում ավանդների գումարի 21.82%-ով աճին: Երաշխավորված ավանդների չափերի կրկնապատկման արդյունքում 2010թ. 3-րդ եռամսյակում երաշխավորված ավանդների ընդհանուր գումարն աճել է 54.2 %-ով: 2010թ. ընթացքում

ավանդների գումարի ամենամեծ աճը գրանցվել է 4-րդ եռամսյակում, որը նախորդ եռամսյակի համեմատությամբ կազմել է 11.5%, մինչդեռ երաշխավորված ավանդ ունեցող ֆիզիկական անձ ավանդատուների թիվը նշված եռամսյակում աճել է 3.69%-ով (առանց հաշվի առնելու ԽՍՀՄ Խնայքանկի ավանդատուներին): Ավանդների այսպիսի աճը պայմանավորված է նաև երաշխավորված ավանդների չափերի կրկնապատկման վերաբերյալ ավանդատուների տեղեկացվածության բարձրացմամբ: Գրանցված արդյունքները վկայում են, որ ավելացել է ավանդատուների վստահությունը ավանդների երաշխավորման համակարգի նկատմամբ, հաշվի առնելով երաշխավորված ավանդների չափերի սահմաններում ներդրվող ծավալները: Եթե մինչև երաշխավորված ավանդների չափերի կրկնապատկումը՝ 2010թ. 1-ին և 2-րդ եռամսյակների վերջի դրությամբ երաշխավորված ավանդների կշիռն ավանդների ընդհանուր գումարի մեջ կազմել է համապատասխանաբար 21.97% և 24.02%, ապա դրանից հետո՝ 2010թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների վերջի դրությամբ այն կազմել է համապատասխանաբար 34.89% և 34.29%:

2012 թ. ընթացքում պահպանվել է ֆիզիկական անձանց բանկային ավանդների և երաշխավորված ավանդների աճի նախորդ ժամանակահատվածներում ձևավորված միտումը: 2011թ. համեմատ 2012թ. ֆիզիկական անձանց բանկային ավանդների գումարն ավելացել է շուրջ 32%-ով, իսկ երաշխավորված ավանդների գումարը՝ 27%-ով: 2012թ. ընթացքում երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվն ավելացել է 16%-ով և կազմել է 1 366 512 (նշված հաշվարկում ներառված չեն ՎՏԲ - Հայաստան բանկ ՓԲԸ-ում հաշվառվող նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ավանդատուները): ՀՀ բանկային համակարգում ավանդատուների գերակշիռ մասը միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուներն են: 2012թ. վերջի դրությամբ միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուների կշիռն ավանդատուների ընդհանուր թվի մեջ կազմել է 83.49%, իսկ միայն արտարժույթով ավանդ ունեցող ավանդատուների կշիռը՝ 6.76%:³

Դրական միտումների հետ մեկտեղ, հաշվի առնելով ֆինանսական շուկայի զարգացման դիմամիկան և մեր տնտեսությունում և առօրյա կյանքում բանկային համակարգի աճող դերն ու նշանակությունը, ակնհայտ է, որ ավանդների վերադարձելիությունը ապահովող երաշխավորման համակարգը մշտապես կատարելագործման կարիք է զգալու:

Աշխատանքում անդրադարձել ենք նաև այն հարցին, որ Հիմնադրամին պարբերական երաշխիքային վճարները կատարում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ռեզիդենտ բանկերը, նույն սահմանաչափով՝ առանց բանկի ռիսկայնությունը հաշվի առնելու: Նշված մոտեցումը մրցակցային անհավասար պայմաններ է ձևավորում բանկային

³ Ավանդների հատուցումը երաշխավորող էլիմնարյա մի տարեկան հաշվետվություն, 2012թ.

համակարգում: Բանկերը, որոնք արդյունավետ են կառավարում իրենց հնարավորությունները, վճարում են այնքան, որքան այն բանկերը, որոնք խնդիրներ ունեն կառավարման գործընթացում: Այսինքն՝ պարբերական երաշխիքային վճարների հաստատուն մոտեցումը չի խրախուսում բանկերի գործունեության հուսալիության բարձրացում, քանի որ, անկախ կառավարման արդյունավետությունից, պետք է կատարեն այնքան վճար, որքան մնացած բանկերը: Ուստի տրամաբանական ենք համարում պարբերական երաշխիքային վճարների տարբերակված մոտեցումը: Բնականաբար, կան երևույթներ, որոնք ներհամակարգային և ներբանկային չեն և անկախ բանկի կառավարման մակարդակից առկա են և լի են ռիսկերով, այնուհանդերձ գտնում ենք, որ արդարացի չէ այն մոտեցումը, որ բանկերը, որոնք արդյունավետ են կառավարում իրենց հնարավորությունները, վճարում են այնքան, որքան այն բանկերը, որոնք խնդիրներ ունեն կառավարման գործընթացում: Այս պարագայում, գտնում ենք, որ արդարացի կլինի, եթե Ապահովագրողը ԵԿԿԿՎՎՎ վերահսկողը կոնկրետ բանկերի գործունեության հետ կապված ռիսկերը և կայունությունը գնահատի (կիրառելով բանկային վերահսկողություն իրականացնելիս օգտագործվող մեթոդ հանդիսացող ՔԱՍԵԼԱ՝ բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը) և սահմանի բանկերի համար ապահովագրավճարներ՝ հիմնված այդ գնահատականների վրա: Այդ կերպ բանկերը, որոնց գործունեությունը կհամարվի ավելի հուսալի, կվճարեն ավելի քիչ, քան այն բանկերը, որոնց գործունեությունը, մասնագետների եզրակացմամբ, ուղեկցվում է առավել բարձր ռիսկի մակարդակով: Սա կարող է գործուն շարժառիթ լինել բանկերի գործունեությունն առավել խելամիտ հիմքի վրա ծավալելու՝ ապահովագրավճարներին ուղղված ծախսերը կրճատելու համար: Այսպիսով, առաջարկվել է կիրառել բանկերի կողմից կատարվող պարբերական երաշխիքային վճարների հաշվարկման նոր մեթոդաբանությունը, որը քայլերով ներկայացված է աշխատանքում:

Ատենախոսությունում կատարված տեսական, մեթոդական ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք առաջարկություններ և եզրակացություններ, որոնք ամփոփ տեսքով ներկայացված են ստորև.

- Բանկային գործունեության խնդիրներից է ավանդատուների հետ փոխշահավետ և հուսալի փոխհարաբերությունների համակարգի ստեղծումը, որի նպատակով մի շարք երկրներում մշակվել և ներդրվել են ավանդների ապահովագրման տարբեր համակարգեր: Բանկերը, հանդիսանալով միջնորդներ ազատ դրամական միջոցներ տնօրինողների և փոխառու միջոցների կարիք ունեցողների միջև, լուրջ դերակատարում ունեն տնտեսության ֆինանսական կարիքների բավարարման գործում: Միևնույն ժամանակ, բանկային գործունեությունը կապված է ռիսկերի կառավարման հետ, որին ուղղված գործուն համակարգի առկայությունը

նպաստում է ինչպես բանկի նկատմամբ վստահության, այնպես էլ նրա կողմից մատուցվող ծառայությունների գրավչության մակարդակի բարձրացմանը: Նման համակարգն, անշուշտ, պետք է ներառի կարգավորման, բանկային գործունեության վերահսկման, վերջին ատյանի վարկատուի, ինչպես նաև ավանդների ապահովագրման գործառույթները:

- Ավանդատուների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը երկրներին պարտադրում է օգտագործել որոշակի խմբի վարկատուների ռիսկերը սահմանափակող տարատեսակ մեխանիզմներ: Այս տեսանկյունից, ավանդների ապահովագրումը կանոնակարգող օրենսդրությունը պետք է հստակ սահմանի պաշտպանության ենթակա պարտավորությունների շրջանակը, փոխհատուցման սահմանաչափերը և անվճարունակ բանկերի նկատմամբ պահանջների բավարարման մեխանիզմները: Օրենսդրական դաշտը պետք է նաև հնարավորինս սահմանափակի սուբյեկտիվիզմի հնարավորությունը և կայուն երաշխիքներ տա ավանդատուներին հնարավոր ռիսկերից խուսափելու համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ այն, որ նույնիսկ ավանդների ապահովագրման լավ կազմակերպված համակարգը թույլ է տալիս հաղթահարել իրավիճակը միայն սահմանափակ քանակով միաժամանակ սնանկացած բանկերի պարագայում: Հետևաբար, չի կարելի ակնկալել, որ տվյալ համակարգը կարող է ինքնուրույն հաղթահարել համակարգային ճգնաժամը:
- Չնայած վերջին տարիներին հանրապետությունում ավանդների ապահովագրման համակարգի ներդրման և շարունակական զարգացման ուղղությամբ իրականացված քայլերի արդյունքում արժանագրվել է էական առաջընթաց, այդուհանդերձ, դեռևս գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն ազդում են այդ համակարգի գործունեության արդյունավետության վրա: Հաշվի առնելով ֆինանսական շուկայի զարգացման դինամիկան և տնտեսական զարգացման գործում բանկային համակարգի աճող դերն ու նշանակությունը, ներկա փուլում հրամայական պահանջ է այդ համակարգի կատարելագործումը և զարգացումը:
- Օրենսդրական դաշտի կատարելագործման և, դրանով պայմանավորված, ավանդների ապահովագրման համակարգի զարգացման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում կիրառել և պարբերական երաշխիքային վճարներ սահմանել միայն երաշխավորման ենթակա բանկային ավանդների գծով: Նման քայլը, մեր համոզմամբ, հնարավորություն կտա որոշ չիմնավորված ծախսերի կրճատման միջոցով ապահովել բանկային ծառայությունների մատչելիությունը և հաճախորդների համար դրանցից օգտվելու գրավչությունը: Միաժամանակ, կարծում ենք, նպատակահարմար է բանկային ավանդների հատուցումը երաշխավորել ոչ միայն ֆիզիկական,

այլ նաև իրավաբանական անձանց ավանդների մասով, ինչը հնարավորություն կտա ավելացնել բանկային համակարգի կողմից ներգրավվող միջոցների ծավալը, ամրապնդել բանկերի ռեսուրսային բազան և, դրանով իսկ, մեծացնել բանկային համակարգի կողմից տնտեսության ֆինանսավորման հնարավորությունները:

- Հայաստանի Հանրապետությունում ավանդների ապահովագրությունն իրականացնող մարմնի գործունեության թափանցիկությունը, մեր կարծիքով, չի գտնվում բավարար մակարդակի վրա, ինչը դրականորեն չի անդրադառնում ավանդների ներգրավման և դրանց ապահովագրման հետ կապված ողջ գործընթացի վրա: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի վերլուծությունը, այն ավանդների ապահովագրման համակարգի հիմնարար սկզբունքներից մեկն է: Այդ նպատակով անհրաժեշտ է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում սահմանել Հիմնադրամի գործունեության թսփանցիկության ապահովմանն ուղղված մեխանիզմներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել հասարակության և բանկերի տեղեկացվածության աստիճանը Հիմնադրամի գործունեության վերաբերյալ: Նման քայլն, ակնհայտորեն, տվյալ կառույցի հանդեպ վստահության մակարդակի բարձրացման գրավական է հանդիսանում:
- Ավանդների ապահովագրումը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանվում է, որ Հիմնադրամին պարբերական երաշխիքային վճարներ կատարում են ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ բանկերը միևնույն սահմանաչափով: Նման մոտեցումն, անշուշտ, մրցակցային անհավասար պայմաններ է ձևավորում բանկային համակարգում, քանի որ այդ վճարների որոշման ժամանակ բանկի ռիսկայնությունը հաշվի չի առնվում: Ավելին, դա չի նպաստում բանկերի գործունեության հուսալիության բարձրացմանը և խթաններ չի ստեղծում բանկերի կողմից այդ ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ իրականացնելու համար: Հետևաբար, նպատակահարմար է ապահովագրավճարների մեծությունը կախվածության մեջ դնել բանկերի կայունության ցուցանիշներից, ինչի արդյունքում առավել հուսալի բանկերը կվճարեն ավելի քիչ, քան բարձր ռիսկայնություն ունեցող բանկերը:
- Ավանդների ապահովագրման ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրներից է օրենսդրության այն պահանջը, համաձայն որի արտարժույթով և դրամով ներդրված ավանդների դիմաց բանկերը կատարում են նույն դրույքաչափով պարբերական երաշխիքային վճարներ Հիմնադրամին: Նման մոտեցումը, մեր համոզմամբ, հիմնավորված և տրամաբանական չէ, քանի որ արտարժույթային ավանդների ապահովագրված սահմանաչափը կրկնակի զիջում է դրամային ավանդների փոխհատուցման սահմանաչափին: Կարծում ենք, անհրաժեշտ է կամ նվազեցնել պարբերական երաշխիքային վճարների դրույքաչափը

արտարժութային ավանդների դեպքում, կամ էլ բարձրացնելով արտարժութային ավանդների փոխհատուցման սահմանաչափը՝ հավասարեցնել այն դրամային ավանդների սահմանաչափին, առավել ևս, որ արտարժույթով ներդրված ավանդները զգալի չափով գերազանցում են դրամային ավանդներին:

Չեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված են հետևյալ գիտական աշխատանքները.

1. Դովլաթյան Յ.Յ., Բանկային ավանդների ապահովագրման միջազգային փորձը, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» պարբերական, Երևան, 2009, N4, էջ 147-153:
2. Դովլաթյան Յ.Յ., Ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի հիմնարար սկզբունքները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, հուլիս-օգոստոս 2009, #8-9 (109-110), էջ 47-48:
3. Դովլաթյան Յ.Յ., Ավանդների ապահովագրման ժամանակակից առանձնահատկությունները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, նոյեմբեր 2012, #11 (149), էջ 38-40:

СПОСОБЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ СТРАХОВАНИЯ ВКЛАДОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, денежное обращение и кредиты”.

Защита диссертации состоится 24-го октября 2013 года, в 15³⁰ часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, Ереван, ул. М. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

В условиях рыночной экономики очень большую роль играет банковская система, которая имеет ключевое значение в обеспечении макроэкономической стабильности и нормального функционирования экономики. За прошедший период экономических реформ в Республике Армения в этом направлении была проделана огромная работа, в результате чего образовалась банковская система, отвечающая основным требованиям и принципам рыночной экономики. Вместе с отмеченными достижениями, однако, следует отметить, что в этой области все еще существует ряд проблем, которые существенно ограничивают возможности экономики для естественной жизнедеятельности.

На современном этапе очень важное значение приобретают вопросы совершенствования механизмов стимулирования влияния инвестиционной деятельности банковской системы и роста объема финансовых потоков на экономическое развитие. Очевидно, что наличие развитой банковской системы в любой стране, по сути, является важным условием социально-экономического прогресса. В то же время, надлежащее выполнение банковской системой отведенных ей функций зависит от ресурсной обеспеченности последней, которая является условием для эффективного решения вопроса финансирования экономики банками. Особенно, в условиях недостаточных объемов иностранных вкладов большое значение приобретают эффективная централизация внутренних финансовых ресурсов и организация финансового посредничества для этого. Очевидно, в решении упомянутых проблем важная роль отведена банковской системе, чья основная миссия заключается в централизации временно свободных финансовых ресурсов и их распределении созвучно экономическим потребностям. Иными словами, централизация таких средств дает банковской системе возможность трансформировать их в инвестиции и обеспечивать финансовые потребности экономики и населения. Ясно, что в условиях рыночной экономики одной из основных задач является обеспечение их доходности и безопасности. С этой точки зрения, одной из средств решения упомянутого вопроса является страхование вкладов, которое в случае банкротства банка гарантирует вкладчику возврат его депозита. Можно с уверенностью сказать, что система

обязательного страхования вкладов направлена на развитие банковской системы, осуществление банками эффективного финансового посредничества и защиту прав вкладчиков.

Основной целью работы является разработка подходов и рекомендаций по усовершенствованию системы вкладов в условиях рыночной экономики.

Основные научные результаты работы, обусловленные решением выдвинутых исследователем задач, заключаются в следующем;

- разработаны рекомендации по усовершенствованию системы страхования вкладов и обеспечению стабильности банковской системы, в частности, в отношении повышения уровня прозрачности и подотчетности деятельности органа, осуществляющего страхование вкладов, расширение сферы субъектов, вовлеченных в процесс страхования вкладов;

- в результате комплексного анализа нормативно-правовой базы регулирования деятельности системы страхования вкладов предлагаются некоторые законодательные изменения, с целью усовершенствования процесса страхования вкладов и повышения эффективности деятельности системы, в частности, обоснована необходимость различия регулярных гарантийных взносов по банковским вкладам в валюте и драмах; а также предложено, в соответствии с законом, не прекращать выплачивание периодических гарантированных платежей. Считаю целесообразным, чтоб банки продолжали выплачивать гарантированные выплаты фонду, в результате этого, параллельно росту величины накопившихся средств можно будет увеличить размеры гарантированных вкладов.

- в результате комплексного анализа деятельности в системе страхования вкладов предлагается установить некоторую зависимость между страховыми плательщиками и показателем банковской стабильности посредством дифференцирования гарантийных выплат, что будет содействовать формированию стимулов по усовершенствованию результатов собственной финансово-экономической деятельности банков;

- в результате анализа механизма регулярных гарантийных взносов с целью повышения доступности банковских услуг предлагается установить регулярные гарантийные взносы только по линии подлежащих гарантии банковских вкладов.

Рекомендации по усовершенствованию системы страхования вкладов могут быть использованы законодательной и исполнительной властями РА и Центральным банком при разработке и реализации программ усовершенствования и развития системы страхования вкладов. Полученные результаты могут быть также полезны для работников упомянутых структур.

Основные результаты диссертации отражены в трех опубликованных научных статьях.

**WAYS OF IMPROVEMENT OF DEPOSIT INSURANCE SYSTEM
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 – “Finance, Cash flow and credits”.

The defense of the thesis will take place on October 24, 2013, at 15³⁰ at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan str., Yerevan 0025.

ABSTRACT

The role of the banking system in market relations is too big, which is of key importance in ensuring macroeconomic stability and normal functioning of the economy. In the past period of economic reforms tremendous works were carried out in that area in the Republic of Armenia, resulting in formation of banking system that meets the basic requirements and principles of market economy. However, with the success recorded, it should be noted that in this area there are still several problems that significantly limit the ability of the economy to normal life.

At the present stage, the issues of improvement of stimulation mechanisms for impact on the banking sector investment activity and growth of flows of funds on the economic activity become very important. It is obvious, that the existence of a developed banking system in any country, in fact, is an important condition for the socio-economic progress. At the same time, the proper implementation of its functions by the banking system depends on the resource security of the latter, which is an effective solution to the problem of funding of economy by the banks. Especially on the background of insufficient volumes of foreign investment great importance obtain the concentration of internal financial resources and organization of financial intermediation for that purpose. Obviously, an important role for solution of these problems is assigned to the banking system, whose primary mission is intended for centralization of temporarily free funds and their distribution consonant to the requirements of economy. In other words, centralization of such funds enables the banking system to transform them into the investments meet the financial requirements of the economy and the population. Evidently, one of the major issues regarding the deposits in the market economy is assurance of their profitability and security. From this point of view, one of the measures for the solution of this problem is the insurance of deposits, which guarantees a deposit recovery to the depositor in case of the bank's bankruptcy. It can be insisted on, that mandatory deposit insurance system is aimed at the development of the banking system, implementation of effective financial intermediation by banks and protection of depositors' rights.

The main objective of this thesis is development of approaches and suggestions for development of deposit insurance system in the market economy.

The main scientific results, conditioned by the tasks proposed in the study are the following:

- recommendations have been developed for improvement of the deposit insurance system in the country and ensuring of the stability in the banking system, particularly, related the improvement of the level of transparency and accountability of the body implementing deposit insurance, expansion of the scope of entities involved in the process of deposit insurance,

- in the result of comprehensive analysis of the legal framework regulating deposit insurance system activity, the existing gaps and deficiencies have been identified, approaches directed to their elimination were presented; proposals of judicial character directed to the improvement of the process of the deposit insurance were elaborated; necessity of differentiation of periodic retention payments for foreign currency and dram deposits was substantiated, also instead of suspension of the periodical retention it is more reasonable to continue implementing indemnity payments to the Fund, in a result of which alongside with the increase of the accumulated funds the amounts of the indemnity payments should grow proportionally.

- in the result of comprehensive analysis of the deposit insurance system in the country it was proposed to define a certain dependency between insurance fee and bank stability indicator through differentiation of guarantee payments, which will enable the banks to form incentives for improvement of their own financial-economic activity results,

- in the result of analyses of implementation of regular guarantee payments by the banks, for improvement of availability of banking services it was offered to establish regular guarantee payments only for the part of bank deposits liable to guarantee.

Proposals related to the improvement of deposit insurance system can be used by legislative and executive authorities and the Central Bank of RA during development and implementation of deposit insurance system improvement and development projects. The data received can also be useful for the staff working in the mentioned structures.

The main results of the thesis are reflected in the published three scientific articles.

